ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ 2019 թվականի զբոսաշրջության զարգացման

պետական ծրագրի կատարման վերաբերյալ

2019 թվականին ՀՀ պետական բյուջեից Զբոսաշրջության զարգացման ծրագրին հատկացվել է 286.4 մլն դրամ, ճշտված ծրագիրը կազմել է 360.8 մլն դրամ, օգտագործվել է 217.3 մլն դրամ: Ճշտված ծրագրի նկատմամբ փաստացի ծախսերի շեղումը կազմել է 143.5 մլն դրամ, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացնելու արդյունքում առաջացել են տնտեսումներ: 2018 թվականին ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը կազմել են 189.9 մլն դրամ: 2019 թվականին 2018 թվականի համեմատ ծախսերն աճել են 14.4%-ով կամ 27.3 մլն դրամով, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2019 թվականին էականորեն ավելացել են Զբոսաշրջության ծրագրով նախատեսված միջոցառումների քանակը և ծրագրով նախատեսված միջոցառումների համար նախատեսված գումարները: Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվը 2019 թվականին կազմել է 1.894.377, ինչը նախորդ տարվա նույն ծամանակաշրջանի համեմատ աճել է 14.7 %-ով:

Զբոսաշրջության զարգացման 2019 թվականի տարեկան ծրագրի շրջանակներում՝ «Էլեկտրոնային (թվային) մարքեթինգի իրականացում» միջոցառման շրջանակում Հայաստանը և հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնելու նպատակով.

- 2019 թվականին ակտիվացվել է Armenia.Travel պաշտոնական կայքը, հետևյալ սոցիալական հարթակները. Facebook (հետևորդներ՝ 106,658, հավանողներ՝ 91,978), Instagram (հետևորդներ՝ 56,300), VK, Pinterest, Twitter, Telegram, ինչպես նաև բացվել է WeChat նոր հարթակ (կենտրոնացած է Չինաստանի շուկայում)՝ չինարեն լեզվով: Վերոնշյալ հարթակների բովանդակությունը մշակվել է անգլերեն և ռուսերեն լեզուներով:
- Armenia.Travel կայքի համար պատրաստվել է 22 նոր հոդված: Armenia.Travel կայքը հասանելի է ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով: Կայքի այցելությունները կազմել է 250,376 այցելու:

- Tiplr.com կայքի համար պատրաստվել են 9 համառոտ հուշում-հոդվածներ 9 տարբեր թեմաներով, ակտիվ հղում ապահովելով Armenia.Travel պաշտոնական կայքին:
- Armenia.travel կայքը տեղադրվել է թվով 5 հայտնի զբոսաշրջային և բլոգերների կայքերում:
- Armenia.Travel կայքի այցելությունների կտրուկ աճ է ապահովվել՝ 16,700-ից հասցնելով 41,834-ի, որոնցից 87%-ը նոր այցելություններ են, իսկ 13 %-ը կրկնակի այցելություններ:
- Իրականացվում է Armenia.Travel կայքի շարունակական որոնողական համակարգերի առաջխաղացում/ օպտիմալացում (SEO (Search engine optimization) և ամենօրյա սոցիալական մեդիա մարքեթինգ (SMM (Social media marketing)՝ թիրախային շուկաների և հասարակության վրա վճարովի գովազդների կիրառմամբ:
- Google որոնողական հարթակում, Armenia բառի որոնման արդյունքում կայքը հայտնվում է 2-րդ էջում, իսկ Armenia travel բառի որոնման արդյունքում 4-րդ հորիզոնականում:
- Սոցիալական հարթակներում տարածվել են Հայաստանի զբոսաշրջային գրավչությունը ներկայացնող գովազդային հոլովակներ: Armenia.travel կայքի կոնտակտային շտեմարանով տարածվել է 2 հատ լրատվանամակ:

Բոլոր նպատակային շուկաների համար մշակվել և տպագրվել են գովազդատեղեկատվական նյութեր

- Տպագրվել են Հայաստանի մասին տեղեկատվական փաթեթներ հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, չինարեն լեզուներով, թվով 40000 օրինակ, որոնք ներառում են՝ Հայաստանի մասին տեղեկատվական բրոշյուր /20էջ/ քարտեզ, տեղեկատվական թերթիկներ՝ 3 տեսակ, գինու զբոսաշրջության վերաբերյալ բրոշյուր /25 էջ/:

- Ձեռք են բերվել Հայաստանի տարբեր զբոսաշրջային վայրերի թվով 250 HD որակի լուսանկարներ, իրականացվել են մի շարք միջոցառումների լուսանկարահանումներ:

- Մշակվել է գովազդատեղեկատվական փաթեթների նոր դիզայներական կոնցեպտը և Հայաստանի մասին ֆոտոշարքերի նախագիծը:

- Նկարահանվել է «Վարչապետը իմ զբոսավարն է» գովազդային տեսահոլովակը:

Պատրաստվել են Հայաստանի մասին, թվով 3 տարբեր տևողության և տեխնիկական ցուցանիշերով տեսահոլովակներ, տարբեր հարթակների համար:

«Հայաստանյան և օտարերկրյա լրագրողների և զբոսաշրջության ոլորտի մասնագետների ճանաչողական այցերի կազմակերպման» շրջանակներում Հայաստան են հրավիրվել ավելի քան 250 զբոսաշրջության ոլորտի և ԶԼՄ ներկայացուցիչներ, բլոգերներ տարբեր թիրախային շուկաներից՝ մասնավորապես Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա, Շվեցարիա, Իսրայել, ԱՄՆ և Մալայզիա: Այցերի արդյունքում՝ 5+դիտում, 10+տեսանյութ, 50+հոդվածների հրապարակումներ:

«Մասնակցություն միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներին» միջոցառման շրջանակներում 2019 թվականին ապահովվել է Հայաստանի զբոսաշրջության ոլորտի ներկայացուցիչների մասնակցությունը միջազգային հեղինակավոր զբոսաշրջային չորս ցուցահանդեսներին՝ ներկայացնելով Հայաստանը որպես զբոսաշրջության համար գրավիչ ու բարենպաստ ուղղություն.

- «ITB Berlin 2019» միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին՝ թվով 14 զբոսաշրջային ընկերությունների մասնակցությամբ.

- «Top Resa – Փարիզ» միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին՝ թվով 14 զբոսաշրջային ընկերությունների մասնակցությամբ.

- «ITB-Asia Singapore» միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին՝ թվով 9 զբոսաշրջային ընկերությունների մասնակցությամբ.

- «WTM - London» միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին՝ թվով 4 զբոսաշրջային ընկերությունների մասնակցությամբ:

«Հայաստանի մարզերում առնվազն 5 ավանդական փառատոների կազմակերպում» միջոցառման շրջանակներում իրականացվել է 5 փառատոն ՀՀ տարբեր մարզերում

- ՀՀ Վայոց Ձորի մարզի Խաչիկ և Արենի համայնքներում իրականացվել են համապատասխանաբար սեպտեմբերի 21-ին «Գաթայի» և հոկտեմբերի 6-ին «Գինու» փառատոները:

- ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում՝ սեպտեմբերի 7-ին «Մշակութային վերածնունդ, Արվեստների և արհեստների համահայկական փառատոնը» և Իջևան քաղաքում՝ հոկտեմբերի

11-ին «Արկածային Հայաստան» սպորտային և արկածային զբոսաշրջության փառատոնը

- ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում՝ սեպտեմբերի 21-ին կայացել է «Օդագնացության Միջազգային Փառատոն»-Գյումրի 2019» փառատոնը:

Բոլոր փառատոներին իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել տեղի և հարակից համայնքների բնակչությունը, ներքին և ներգնա զբոսաշրջիկները (յուրաքանչյուրին 1500-3500 և ավելին): Փառատոները լուսաբանվել են միջազգային, տեղական և հանրապետական լրատվամիջոցներով, սոցիալական հարթակներում:

«Զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեության ապահովման նպատակով» պետական աջակցություն է տրամադրվել Գորիսի, Գառնիի և Սևանի տեղեկատվական կենտրոնների բնականոն գործունեությունն ապահովելու համար: Նշված տեղեկատվական կենտրոնները իրականացրել կամ աջակցություն են ցուցաբերվել համայնքում առնվազն մեկ զբոսաշրջային միջոցառմանը՝ Սևանում՝ «Սևանի երաժշտական փառատոնին», Գառնիում՝ «ՀՀ Ազգային մշակույթի ժառանգության պահպանության օրվան» նվիրված, Գորիսում՝ իրականացվել է «Թեյի» փառատոնը: Միջոցառումների շրջանակներում ներկայացվել են ազգային մշակույթը՝ երգուպարը, արհեստը, արվեստը, խոհանոցը և այլ: Տեղեկատվական կենտրոնները տեղեկատվական և խորհրդատվական ծառայություն են մատուցել. Սևանում՝ 1800, Գառնիում՝ 2800, Գորիսում՝ 1000 այցելուի: Կենտրոններին տրամադրվել է տեղեկատվական և մեթոդական աջակցություն:

Ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում» բաղադրիչի շրջանակներում կազմակերպվել է զբոսավարների պատրաստման 2 դասընթացներ:

Միջազգային համագործակցության շրջանակներում Հայաստանը մասնակցել է

- Զագրեբում (Խորվաթիա) կայացած ՄԱԿ ԶՀԿ Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 64-րդ նիստին և «Զարգացում, նորարարություն և գործընկերություն» խորագրով աշխատաժողովի աշխատանքներին:

- Ուզբեկստանում կայացած ԱՊՀ զբոսաշրջության խորհրդի հերթական նիստին, վերջինիս շրջանակներում կազմակերպված ԱՊՀ անդամ պետությունների 1-ին ամենամյա զբոսաշրջային ցուցահանդեսին և «Զբոսաշրջությունը ԱՊՀ երկրներում և տարածաշրջանային համագործակցությունը՝ նոր մարտահրավերներ և հնարավորություններ» միջազգային

գիտագործնական սեմինարին:

- Սանկտ-Պետերբուրգում (ՌԴ) կայացած ՄԱԿ-ի զբոսաշրջային համաշխարհային կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի 23-րդ նստաշրջանին: Նստաշրջանի ընթացքում քննարկվել են ՄԱԿ ԶՀԿ գործունեությանը վերաբերող կարևորագույն որոշումներ, 2018-2019 թթ. ծրագրով կատարված և կատարվելիք աշխատանքները, 2020-2021 թթ. ծրագիրը և բյուջեն: Այցի ընթացքում պատվիրակությունը մասնակցել է նաև «Բժշկական և առողջապահական զբոսաշրջության» վերաբերյալ համաժողովին, «Զբոսաշրջության ոլորտում նորարարություն և կայուն զարգացում» թեմայով գագաթնաժողովին, «Զբոսաշրջության ոլորտում կրթության և զբաղվածության հարցերը» թեմայով նախարարական քննարկմանը, ինչպես նաև տարածաշրջանային և ընդհանուր պլենար նիստերին:

- Մոսկվայում կազմակերպված «Համաշխարհային քաղաքներում զբոսաշրջության զարգացման ռազմավարություններ» խորագրով կոնֆերանսին: Տեղի են ունեցել հանդիպումներ ՌԴ-ում ՀՀ դեսպանության և հայ համայնքի ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր՝ ուղղված Ռուսաստանում Հայաստանի ճանաչելիության բարձրացմանը և Ռուսաստանից Հայաստան զբոսաշրջային հոսքերի ավելացմանը:

- Դիլիջանում, հայ-վրացական գործարար համաժողովի շրջանակներում կազմակերպվել է երկու երկրների զբոսաշրջության ոլորտի մասնավոր հատվածի մասնակցությամբ աշխատանքային քննարկումներ, որին մասնակցել են Հայաստանի և Վրաստանի զբոսաշրջության ոլորտի պետական, ինչպես նաև մասնավոր հատվածի ներկայացուցիչները: Քննարկվել են զբոսաշրջության ոլորտում հայ-վրացական համագործակցության շրջանակը, միասնական զբոսաշրջային փաթեթների ձևավորման, ինչպես նաև համատեղ միջոցառումների կազմակերպման հնարավորությունները:

Ստորագրվել են զբոսաշրջության բնագավառում համագործակցության հետևյալ փաստաթղթեր

- «ՀՀ ՏԶՆՆ զբոսաշրջության կոմիտեի և Զբոսաշրջության դաշնային գործակալության (ՌԴ) միջև 2019-2021թթ. համատեղ գործողությունների ծրագիրը»:

- «ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի և Սինգապուրի

Հանրապետության Սինգապուրի զբոսաշրջության խորհրդի միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության ամրապնդման մասին» փոխըմբռնման հուշագիրը:

- «ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության մշակույթի, սպորտի և զբոսաշրջության նախարարության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը:

«Տեղական տնտեսությունների և ենթակառուցվածքների զարգացում» Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի միջև 2016թ. փետրվարի 23-ին կնքվել է N8572-ԱՄ վարկային պայմանգիրը, որը վավերացվել է ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2016թ. դեկտեմբերի 16-ին: «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացում» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) իրականացվում է Արարատ, Վայոց Ձոր, Սյունիք, Կոտայք, Լոռի և Շիրակ մարզերում: Ծրագրի բյուջեն 2016-2021 թթ համար կազմում է 68,720 հազ ԱՄՆ դոլար (55,000 հազ ԱՄՆ դոլար վարկային միջոցներ և 13,720 հազ ԱՄՆ դոլար ՀՀ կառավարության համաֆինանսավորում):

Ծրագրով նախատեսված զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավմանն ու զբոսաշրջային վայրերի հասանելիության ապահովմանն ուղղված հաստատվել, ավարտվել և իրականացվում են հետևյալ ենթածրագրերը՝

Ավարտվել են՝

- Տաթև համայնքի՝ դեպի Տաթևի վանական համալիր տանող 6000 մետր երկարությամբ ճանապարհի վերակառուցումը,

- Գյուլագարակ համայնքի՝ դեպի «Սոճուտ» դենդրոպարկ տանող 2800 մետր երկարությամբ ճանապարհի վերակառուցումը,

- Գյումրի համայնքի՝ «Կումայրի պատմական թաղամասի» 6 փողոցների վերականգնումը:

Ընթացքում են՝

- Գառնու զբոսաշրջային գոտու ենթածրագրի շրջանակներում դեպի «Քարերի սիմֆոնիա» բնական հուշարձան տանող՝ 2147 մետր երկարությամբ ճանապարհի վերականգնումը և հարակից տարածքի բարեկարգումը,

- Խոր Վիրապվանքի տարածքի բարեկարգումը:

Մրցույթի փուլում են՝

- Գորիս համայնքի ժառանգության հանգույցի վերականգնման շրջանակներում Գորիս քաղաքի «Կենտրոնական մասի պատմաճարտարապետական միջավայրի վերականգնում և Վարարակ գետի աջափնյա հատվածի բարեկարգում» ենթածրագիրը, որն ընդգրկում է Հին Գորիս թաղամասի և զբոսաշրջային գրավչություն ներկայացնող մի շարք ենթակառուցվածքների վերականգնումը,

- Արենի գյուղում կառուցվող «Արենի ՈՒյան Հոտել» հյուրանոցի՝ հանրային մասնավոր համագործակցության բաղադրիչի շրջանակում ենթակառուցվածքների բարեկարգման ապահովում, մասնավորապես՝ ճանապարհ, ջրամատակարարում, էլետրամատակարարում, գազամատակարարում, թվային կապուղու ապահովում ենթածրագիրը,

- Հայաստանի պատմական մայրաքաղաք Դվինի թանգարանացում և հարակից տարածքների բարեկարգման ենթածրագրի առաջին փուլով նախատեսված Հնաբերդ համայնքի՝ «Դվինի արգելավայրի հուշարձանների մասնակի վերականգնում, ամրակայում և ավտոկայանատեղիի կառուցում» ենթածրագիրը:

Հաստատման փուլում են՝

- Գառնի համայնքի հրապարակից «Դեպի Գառնու տաճար տանող մոտ 1300 մետր երկարությամբ ճանապարհի և հարակից տարածքի բարեկարգում»,

- Դեպի քարանձավային քաղաք՝ Հին Խնձորեսկ տանող մոտ 3.1 կմ երկարությամբ ճանապարհի վերականգնում,

- «Զորաց Քարեր հուշարձանի մերձակա տարածքում զբոսաշրջային գոտու ստեղծման» շրջանակներում դեպի «Զորաց Քարեր» հուշարձանի մերձակա տարածք տանող ճանապարհի բարեկարգման և ավտոկայանատեղիի կառուցման աշխատանքների իրականացում,

- Կոտայքի և Արարատի մարզերը կապող Գառնի- Լանջազատ ճանապարհի վերանորոգում,

- Լեռնանիստ ձմեռային հանգստավայրի ենթակառուցվածքների զարգացում ենթածրագրերը:

Ծրագրի «Տեխնիկական աջակցություն» բաղադրիչի շրջանակում իրականացվում է՝

- Զբոսաշրջության կոմիտեի կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքների

հիման վրա՝ խորհրդատուների վարձելու գործընթաց,

- դեպի Տաթև վանական համալիր տանող ճանապարհի՝ սողանքային տեղամասը շրջանցող հատվածի երկրաբանական և երկրաֆիզիկական հետազոտություն:

Կարևորելով ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը նախատեսվում է ծրագրի վերակազմավորվում, ինչի արդյունքում Համաշխարհային բանկին կներկայացվեն մինչև 2022 թվականն իրականացվող նոր նախագծերը, ինչպես նաև կգնահատվեն Տավուշ և Գեղարքունիք մարզերի ներգրավման հնարավորությունները: